ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

7 ապրիլի 2020թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Արտակարգ իրավիճակի պայմաններում նոր ուսումնական պրոցեսին անցման գործընթացի քննարկում
2. Ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպում
3. Ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպում
4. Ընթացիկ հարցեր:

/զեկ. Մ.Զաքարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ.Զաքարյանը:

1. ԼՍԵՑԻՆ- Արտակարգ իրավիճակի պայմաններում նոր ուսումնական պրոցեսին անցման գործընթացի քննարկում

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ.Զաքարյանը: Նա ներկայացրեց , որ դասընթացները կազմակերպված են ZOOM համակարգով, ըստ դասացուցակի: Որոշ դասերի անհրաժեշտ տեղաշարժերի դեպքում տեղեկացվում է դեկանին և ուսումնական մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կիմ Սարոյանը ներկայացրեց ZOOM- ի առավելությունները՝ որակի առումով, արձագանքները ֆիլտրվում են, ունի անվճար տարբերակ, Թերությունները-ունի անվտանգության խնդիրներ:Առաջարկեց կոնֆիդենցիալ ինֆորմացիա չտեղադրել chat-ում, չարտոնված անձանց մուտքերը արգելել:
Տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը ասաց պարզել, թե ում տեխնիկական միջոցները թույլ չեն տալիս մասնակցել առցանց դասընթացներին: ԵՊՀ ԻՄ-ը հանարավորություն ունի տրամադրել համակարգիչներ և հեռախոսներ:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացնել ինֆորմացիա այն ուսանողների մասին, ովքեր չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ առցանց դասընթացներին մասնակցելու համար:

2. ԼՍԵՑԻՆ - Ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպում

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց , որ ֆակուլտետում ունենք երկու մասնագիտություն՝ ԻԿՄ և ՔԿԳ : Ուսումնական մասը տրամադրել է 15-25 ժամանակահատվածը: Քննարկման ներկայացրեց նախապես կազմած գրաֆիկը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ–Ա.Մակարյանը ասաց քննությունները անցկացնել հանձնաժողովով: Ա.Ցուցուլյանը առաջարկեց ուսխորհրդի ուսանողի ներկայություն :
Զաքարյանը առաջարկեց հանձնաժողովի կազմում ամբիոնի վարիչի պարտադիր ներկայությունը: Թեստային համակարգով անցկացնելու դեպքում հանձնաժողովի անհրաժեշտություն չկա: Ընթացիկ ստուգումները հանվում են: Փոխարենը յուրաքանչյուր դասախոս իր գնահատման ընթացակարգում կարող է կատարել փոփոխություն, հաշվի առնել ակտիվությունը, տնային հանձնարարությունները, ինքնուրույն աշխատանքներին տալ միավոր:
ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել գրաֆիկը և ֆիքսել ժամը 10:00, հանձնաժողովի կազմը:

3.ԼՍԵՑԻՆ- Ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ տեղի է ունեցել թեմայի փոփոխություն առանց ամբիոնին տեղյակ պահելու, փոխվել է Գերասիմ Ալավերդյանի ավարտական աշխատանքի թեման, սակայն ըստ էության ուսանողը պատրաստ է

ներկայացնել երկու թեման, պետք է ուշադիր լինել, նման փոփոխությունները անհրաժեշտ նախապես ներկայացնել ամբիոնի հաստատմանը:

Մ.Զաքարյան ներկայացրեց, որ ուսանողներին զգուշացվելու է նախապես կարգավորել տեխնիկական միջոցները և առաջարկեց ընտրել նախապաշտպանության հանձնաժողոի կազմ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսանողները նախապես պրեզենտացիաները ներկայացնեն ամբիոնի գործավարին և հաստատել նախապաշտպանության հանձնաժողովի կազմը:

ՆԱԽԱԳԱՀ Մ.Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ